- Գրգռիչ թունավոր նյութեր (օր. ֆորմալին) կուլ տալու դեպքում խմեցնել որեւէ պարուրող նյութ (օր. օսլայի մածուկ): Չի կարելի տալ կաթ, ճարպեր, ալկոհոլային խմիչքներ:
- Մաշկային արյունահոսության դեպքում՝ դնել ջրածնի գերօքսիդով թրջած տամպոններ:
- Քթային արյունահոսության դեպքում դնել սառը թրջոցներ քթարմատին եւ ծոծրակին, իսկ քթի մեջ՝ ջրածնի գերօքսիդով կամ խիտ աղային լուծույթով թրջած տամպոններ:

Թունաքիմիկատներով աշխատելու վայրում ցանկալի է ունենալ առաջին մինչբուժական օգնության դեղատուփ: Թունաքիմիկատներով մշտապես աշխատողներին առաջարկվում է անցնել նախնական բուժզննում:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել եւ հրատարակվել է «Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի հասարակական կազմակերպության կողմից Կայուն օրգանական աղտոտիչների ոչնչացման միջազգային ծրագրի (IPEP-International POPs Elinimation Program) կողմից տրամադրված միջոցների հաշվին:

«Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի
Հասարակական կազմակերպություն

375019, ՀՀ, ք. Երեւան
Բաղրամյան պող. 24դ, սենյակ 609
Հեռ: (+374-1)-52 36 04
E-mail: office@awhhe.am
URL: www.awhhe.am

AWHHE

3

Առաջին օգնությունը թունավորման դեպքում

www.awhhe.am
Yerevan 2004

Առաջին օգնությունը թունավորման դեպքում

Թունաքիմիկատների ոչ ճիշտ օգտագործման դեպքում հնարավոր են տարբեր տեսակի թունավորումներ: Թունավորման բոլոր դեպքերում անկախ ծանրությունից պետք է անհապաղ դիմել բժշկի կամ բուժակի՝ տրամադրելով նրանց թունաքիմիկատի պիտակին նշված լրիվ տեղեկատվությունը:

Առաջին օգնությունը ներառում է այնպիսի միջոցառումներ, որոնք կարող են կատարել իրենք՝ թունաքիմիկատներով աշխատողները (ինքնօգնություն, փոխօգնություն) եւ բուժաշխատողները (հատուկ միջոցառումներ):

- Տուժածին ազատել շնչառությունը դժվարացնող հագուստից:
- Զգուշությամբ հանել հիվանդի աղտոտված հագուստը եւ շնչադիմակը:
- Շնչուղիներով թունավորման դեպքում տուժածին հանել վտանգավոր գոտուց, ապահովել մաքուր օդի մուտքը:



- Շնչառության թուլացման դեպքում տուժածի քթին մոտեցնել անուշադրի սպիրտ /նաշատիր/:
- Շնչառության դադարի դեպքում անմիջապես կատարել արհեստական շնչառություն, նախօրոք լորձից մաքրելով բերանի խոռոչը եւ դուրս հանելով կուլ գնացած լեզուն:
- Մաշկային թունավորման դեպքում լաթի կտորով զգուշորեն հեռացնել թունաքիմիկատը մաշկի վրայից, ապա լվանալ առատ սառը ջրով, հիմնային լուծույթով կամ օճառով:
- Աչքերի մեջ ընկնելու դեպքում լվանալ առատ ջրով, խմելու սոդայի կամ բորաթթվի լուծույթով:
- Աղեստամոքսային տրակտի թունավորման դեպքում խմեցնել մի քանի բաժակ ջուր (ցանկալի է գոլ) կամ մանգանա-կալիական թույլ վարդագույն լուծույթ:
- Ըմպանի ետին պատը գրգռելով առաջացնել փսխում, կրկնել այս գործողությունը 2-3 անգամ: (Չի կարելի փսխում առաջացնել հիվանդի մոտ, որը անգիտակից վիճակում է կամ ջղաձգության համախտանիշ ունի:)
- Ջղաձգումների դեպքում ապահովել տուժածի լիակատար հանգիստը՝ բացառելով ամեն տեսակ գրգռվածություն: